ԲՅՈՒԼԵՏԵՆ

Դեկտեմբեր 2024թ.

Պալատի գրասենյակի ձեռքբերում

2025 թվականը Պալատի 28-ամյա պատմության մեջ կարձանագրվի նշանակալի իրադարձությամբ: Տարիներ շարունակ վարձակալական հիմունքներով տարբեր հասցեներում գործունեություն ծավալած Պալատը նոր շունչ է ստանում՝ շարունակելով իր առաջընթացը սեփական հասցեում, բարելավված պայմաններում և ավելի լայն հնարավորություններով: Պալատը ձեռք է բերել 555 քմ ընդհանուր մակերեսով գրասենյակային տարածք Երևան, Մոնթե Մելքոնյան 46/2 հասցեում: Այն իր կառուցվածքով և ֆունկցիոնալությամբ լիովին կհամապատասխանի Պալատի պահանջներին՝ ապահովելով բնականոն գործունեության շարունակականությունը:
Այս նշանակալի ձեռքբերումը իրականություն է դարձել Պալատի անդամների ակտիվ մասնակցության, ինչպես նաև տարիների ընթացքում Պալատի կայացմանն ուղղված համախմբված ջանքերի շնորհիվ: Այն ամրապնդում է մեր մասնագիտական համայնքի հիմքերը և ներկայանում է որպես առաջընթացի և կայունության խորհրդանիշ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 27 դեկտեմբերի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲԵԿՏ(ՆԵՐ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Մալաթիա-Սեբաստիա Մոնթե Մելքոնյան փողոց 46/2 շենք, 295 տարածք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

25.12.2024թ. թիվ 13719 առուվաճառքի պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-007-0282-0271

Մակերեսի չափը (հա)՝ 0.415536

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի Նիստ

Դեկտեմբերին գումարվել է Պալատի խորհրդի 2 նիստ՝ 16.12.2024թ.ին և 25.12.2024թ.-ին:

16.12.2024թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 17 հարց: Քննարկման արդյունքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի ֆիզիկական անձ անդամի անդամակցությունը դադարեցնելու, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի հանձնաժողովների 2025թ. գործունեության տարեկան ծրագրերը հաստատելու, Պալատի ՇՄԶ կարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու, Պալատի Որակավորման հանձնաժողովի կանոնադրության փոփոխությունը հաստատելու, Պալատի անդամ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ նկատմամբ ԿՊՄ կիրառելու,Պալատի ՈՊՊԿ հանձնաժողովի կանոնադրության փոփոխությունը հաստատելու, Պալատի ՈՊՊԿ հանձնաժողովի նախագահ նշանակելու և անհատական կազմում փոփոխություն կատարելու մասին որոշումները:

25.12.2024թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 8 հարց: Քննարկման արդյունքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած մեկ կազմակերպությանը Պալատի անդամ ընդունելու, 1 անձի Պալատի փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի 2025 թվականի բյուջեն հաստատելու, Պալատի խորհրդի 26.12.22թ N 52-Ա որոշման փոփոխությունը հաստատելու, Պալատի 2024 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող կազմակերպությանը հաստատելու, Պալատի ՈՊՊԿ հանձնաժողովին անդամի անդամակցությունը դադարեցնելու, Պալատի ՈՊՊԿ հանձնաժողովի կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 3 նիստ՝ 03.12.2024թ.-ին, 12.12.2024թ.-ին և 19.12.2024թ.-ին, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին հաստատել ընդհանուր թվով 6 ֆիզիկական անձանց և 1 կազմակերպության անդամակցությունը Պալատին:

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 3 նիստ՝ 05.12.2024թ.-ին, 10.12.2024թ.-ին, 17.12.2024թ.-ին, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին փորձագետ հաշվապահի որակավորում շնորհել 3 անձի և հավանություն է տվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

09.11.2024թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Աշխատանքային պայմանագրի կնքումը էլեկտրոնային թվային համակարգով, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր Ժորա Սարգսյանը:

13.12.2024թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«ՖՀՄՍ –15-ին և ՖՀՄՍ – 9-ին առնչվող գործնական խնդիրներ» թեմայով դասընթացը: Այն վարում էր Մարինա Ենգիբարյանը:

17.12.2024թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Նախորդ դասընթացներին ներկայացված ոչ ռեզիդենտների հարկման ընթացակարգերի ամփոփում (այդ թվում՝ հարց ու պատասխան ձևաչափով): Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի հիմնական դրույթների ներկայացում և քննարկում» թեմայով դասընթացը: Այն վարում էր Հովհաննես Յանիկյանը:

18.12.2024թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Տրանսֆերային գնագոյացման փաստաթղթաշրջանառությունը» թեմայով դասընթացը: Այն վարում էր Նաիրուհի Ավետիսյանը:

20.12.2024թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«ՄԱՍ -315 էական խեղաթյուրումների ռիսկերի հայտնաբերումն ու գնահատումը՝ կազմակերպության և դրա միջավայրի վերաբերյալ պատկերացումների միջոցով» թեմայով դասընթացը: Այն վարում էր Մարինա Ենգիբարյանը:
25.12.2024թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Աուդիտորական անկախություն» թեմայով դասընթացը: Այն վարում էր Անժելա Գևորգյանը:





ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄ

2024թ. դեկտեմբերի 12-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի ունեցավ հերթական միջոցառումը՝ նվիրված որակավորման կրթական ծրագրի դժվարին փուլը պատվով հաղթահարած և պահանջվող չափանիշներին համապատասխանության արդյունքում աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստացած անձանց որակավորման վկայականների հանձնմանը: Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) նախագահ, Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը և որակավորում ստացած մասնագետները:

ՀԱԵԽ հերթական նիստ

2024թ. դեկտեմբերի 17-ին տեղի ունեցավ Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) հերթական նիստը:
Նիստը նախագահում էր ՀԱԵԽ նախագահ, Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը:
Նիստի ընթացքում հաստատվեցին ՀԱԵԽ միջազգային համագործակցության հանձնաժողովի անհատական կազմի, մասնագիտական էթիկայի, թվային տնտեսության պայմաններում հաշվապահական հաշվառման և աուդիտի հանձնաժողովների կանոնադրության փոփոխությունների վերաբերյալ որոշումները: Քննարկվեցին նաև ՀՄԴ ցանցային անդամության համար փաստաթղթերի փաթեթի և դիմումի ներկայացման ժամկետի և ՀԱԵԽ պաշտոնական ինտերնետային կայքի վերաբերյալ հարցերը:
ՀԱԵԽ-ի ընդհանուր ժողովին մասնակցում էին նաև Պալատի խորհրդի անդամ Հովհաննես Պետրոսյանը և գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎ. ՎԻԵՆՆԱ

Սույն թվականի դեկտեմբերի 3-ից 5-ը Վիեննայում (Ավստրիա) տեղի ունեցավ Համաշխարհային բանկի ֆինանսական հաշվետվականության բարեփոխումների կենտրոնի կողմից կազմակերպված Կրթության և ֆինանսական հաշվետվականության մասնագետների համատեղ 10-րդ գիտաժողովը: Գիտաժողովին մասնակցում էին Հաշվապահների և աուդիտորների Եվրասիական խմբի (ՀԱԵԽ) նախագահ, Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, խորհրդի անդամներ Հովհաննես Պետրոսյանը և Դավիթ Անանյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը, Հանրային վերահսկողության խորհրդի նախագահի տեղակալ Կարեն Ալավերդյանը և ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչները: ՀՀ հանրային հատվածի հաշվապահների որակավորման և կրթական համակարգի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Հայկ Մնացականյանը: